


ՊԱՅՄԱՆՔ

Յարեհան գին Կ. Պոլսոյ հոգ. 10 Լ. 50 Կ.
Քաւառաց 12 »
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 »
Քաւառաց 6 »
Ստար երկիրներու 2 1/2 Լ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
տար 3 դուրոյ, երկու անգամի հա-
տար 2 դուր 5. աւելի անգամներու
համար զատ սահմանափակ չկը-
լայ :
Իրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼՐԱՊԵՏ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գնացած լրագրաց ճանրու-
ծ արքայ խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրուի իւր խմբագրի
— Տնօրէնին անհրաժեշտ է : Գալա-
թիա Ստանբուլի քաղաքի խմբագրութեան
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուի :
Չապուած նամակ, յոգում, եւ
ետ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱԿՆԵՐՈՒՄ 50 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շատ անգամ ըսուած է թէ Անգ-
ղիոյ ազգայնական կուսակցութեան ի
նպատակ թուրքիոյ քրիստոնէից ըրած
ջանքն և ցոյց տուած համակրութիւն-
նը պարզապէս կուսակցական ոգւոյ
արդիւնք են, թէ փոխանակ պահպա-
նողականաց եթէ ազգայնական իշխա-
նութիւնն իրենց ձեռք ունենային,
իրենք ալ աւելի բան մը չպիտի ընէ-
ին, և թէ՛ ընդհակառակն՝ Լորտ Հար-
թիսթընի և Պ. Կլաւսթոնի նման ա-
զգայնական կուսակցութեան պետա-
կան անձինք նուազ պիտի ակոթէ-
ին թուրքիոյ ներքին գործոց միջա-
միտելէ, և Արեւելեան քրիստոնէից վի-
ճակը շատ չպիտի զբաղեցնէր զիրենք :
Այս կէտը մեծ փաստ մ'ըղած է պահ-
պանողականաց ձեռք, որք ամեն առ-
թիւ չեն դադարի յայտարարել թէ,
Անգղիոյ ներկայ նախարարութիւնն ե-
թէ քիչ բան ըրած Արեւելեան քրիստո-
նէից վիճակին բարեօրոնման համար, ա-
զգայնական կուսակցութիւնն, որ Լորտ
Պիքսթոնֆիլտի նախարարութեան անմի-
ջապէս առաջ իշխանութիւնն իւր ձեռ-
քըն ունէր Պ. Կլաւսթոնի առաջնոր-
դութեան ներքեւ, ամենին հոգ չէ-
տարած. և որովհետեւ ազգայնականը
արդի պահպանողական նախարարու-
թեան աշխարհավարութեանը չեն հա-
նել, իրենք եթէ նորէն իշխանու-
թեան անցնին, չլուսացուի որ ա-
ւելի հոգ տանին թուրքիոյ քրիստո-
նէից վիճակին : Այս ենթադրութեան
ոյժ տալ կը թուին Լորտ Հարթիսթըն-
նի և Պ. Կլաւսթոնի այն սաստիկ յար-
ձակումները նախարարութեան դէմ,
յորս կը յայտարարեն թէ Կիւրտի
պայմանագրերը կնքելով Լորտ Պիքսթո-
նֆիլտ մեծ սխալ մը գործած է, թէ
թուրքիոյ գործոց մէջ նախարարու-
թեան ըրած միջամտութիւնները վը-
նասակար են, ևն, ևն :

Ծանոթ Պ. Հուրթիլի պահպանող-
ական, որ ինքիւրեւ ինքի իրենց
խան ընտրեցաւ ընդդէմ ազգայնական
Լորտ Ռամսէյի, ընտրութենէն քա-
նի մ'օր առաջ ըրած մէկ բանախո-
սութեանը մէջ մասնաւորապէս ոյժ
տուաւ այս դադարարին, և Պ. Կլ-
աւսթոնի ընթացքը քննադատելով
ցուցուց թէ նա իշխանութեան դը-
լուսը գտնուած ժամանակ ամենին
հոգ չէր տարած թուրքիոյ քրիստո-
նէից վիճակին : Թեւեալ Պ. Կլաւսթոն
պատասխանէ թէ ինք յայնժամ ոչ
Պիքսթոնի դաշնագրին, ոչ ալ Կիւրտի
պայմանագրին նման բան մ'ունէր իւր
ձեռքը՝ որպէս զի կարենար ազդու
միջամտութիւն մ'ընել ի նպատակ
քրիստոնէից : Այսու ամենայնիւ ինքիւր
բաւ ի պահպանողական երեսփոխանին

հետեւեալ խօսքերը բաւական հետա-
քըքրական են :

“Գալով թուրքիոյ գործոց, ա-
ռանց փարսնման կըսեմ թէ Եւրոպե-
ոյ խաղաղութեան ամենամեծ հար-
ւածը տուող բանն՝ իւր իշխանու-
թեան հինգ տարիներուն մէջ Պ. Կլ-
աւսթոնի բռնած ընթացքն եղած
է : Նախկին ազգայնական կուսակ-
ցութիւնը, որոց աշխարհավարութիւ-
նը չարունակելէ զատ մեք (պահպա-
նողականը) ուրիշ բան չեմք ընէր այ-
ժմ, միշտ թուրք իշխանութեանց
հետ հաղորդակցութեան մէջ գըտ-
նուած են՝ ջանալով բարեկարգել ըդ
թուրքիա, այնպէս որ սա ազատ և
անկախ երկիր մը մնայ : Այն սրան-
չելի մարդուն՝ Լորտ Սթրաթֆորտ
տը Բեաքլիֆին՝ ժամանակէն սկսեալ,
նոքա ամեն միջոցներով փորձեցին
թուրքիոյ կառավարութիւնը բարո-
քել, որպէս զի զօրաւոր տէրութիւն
մը լինի և Ռուսիոյ յառաջնադաս
թեան կարենայ դիմադրել : Բայց Պ.
Կլաւսթոնի պաշտօնավարութեան մի-
ջոցին տեսայ թէ ընդ ամենը միայն
քսան կտոր նամակ կամ հեռագիր
զրկուեր է Կ. Պոլսէ : Կը տեսնեմ որ
երբ յայնժամ խորհրդարանին մէջ հար-
ցուցներ եղեր են թուրքիոյ քրիստո-
նէից վիճակին վրայ, արտաքին
գործոց նախարարն ամենայն աճա-
պարանօք հեռագիր զրկուր է Կ. Պո-
լսէ՝ նախ ինք իմանալու համար թէ
քրիստոնէից վիճակն ինչպէս է և թէ
արդեօք բարենորոգման հոգ կը
տարուի : Ես կը կարծեմ թէ Պ. Կլ-
աւսթոնի կառավարութիւնը թուր-
քիոյ նկատմամբ բռնած ընթացքը
ուրիշ ամեն բանէ աւելի պատճառ
եղած է վերջին տարիներու տագնա-
պին, և թէ փարսիկ դաշնագրին Սե-
ծովու վերաբերեալ մասին նշկատ-
մամբ այդ կառավարութեան բռնած
ընթացքն ալ իւր ամենամեծ արատն
եղած է : (Հաւանութեան նշաններ)
Ամենք ալ գիտէք թէ Լորտ Ռուս-
թի, Լորտ Բալմֆրէյսթին և Լորտ Բը-
լարէնտոնի նման առաջին կարգի պե-
տական անձինք՝ Սեծովու մէջ ամ-
բութիւն չինելն և հոն նաւատորմ
ունենալը Ռուսիոյ արդիւրոյ յօդուա-
ծը՝ փարսիկ դաշնագրին հակառակ
տը նկատած են : Բայց երբ Զրանքո-
Գերմանական պատերազմը ծագե-
ցաւ, Ռուսիա առիթ գտնելով, “Ոչ
ես կը հաւանիմ այդ յօդուածին” ը-
սաւ : “Դժբաղդարա” Պ. Կլաւսթոն
զիջաւ, և այս բանն Ռուսիական թուր-
քիոյ մէջ, ինչպէս նաեւ աշխարհի ա-
մեն կողմէ իրեն նշան մը նկատեցաւ
թէ Անգղիա ոչ ևս ընդդիմութիւն
պիտի ընէր Ռուսիոյ յառաջնադա-
ցութեան : (Նախահարութիւնը.)

Պ. Հուրթիլի վերջիշեալ գանդատը
թէ Պ. Կլաւսթոն իշխանութեան վրայ
գտնուած միջոցին հոգ չէր տանէր

թուրքիոյ քրիստոնէից վիճակին, ինքտ
արդարացի է : Ամենք ալ գիտեմք
որ ամէկ վեց տարի առաջ, այսինքն
երբ Պ. Կլաւսթոն առաջին նախա-
րարի պաշտօնը կը վարէր, թուրքիոյ
նկատմամբ Անգղիոյ աշխարհավարու-
թիւնն ինչ էր : “Ճնտարեբերութիւն”
բառը կատարելապէս կը բացատրէ
այդ աշխարհավարութիւնը : Պ. Կլ-
աւսթոնն Եւրոպական և Արեւելեան
թուրքիոյ խեղ մը տեղերը գտնուող
Անգղիական հիւպատոսներն անգամ
եւս կանչած էր այն խնայողութիւնը
դոյտեցնելու նպատակաւ, որոյ վրայ
յաճախ կը պարծի՝ պահպանողակա-
նաց ըրած ծախքերը քննադատելով :
Բայց Պ. Կլաւսթոն կրնայ յայտնա-
կաւ պատասխանել Պ. Հուրթիլի՝ հար-
ցնելով թէ իւր յայտարարութիւնն
Պիքսթոնֆիլտի աշխարհավարութեան
ինչ օգուտ եղած է թուրքիոյ տէրու-
թեան և անոր հպատակ քրիստոնէ-
ից, և թէ Արեւելից ո՞ր քրիստոնէաց
ազգը Լորտ Պիքսթոնֆիլտի միջամտու-
թիւններէն որ և է բարիք կամ օ-
գուտ տեսած է . . . :

Իսկ գալով Սեծովու խնդրոյն,
Պ. Կլաւսթոն կրնայ պատասխանել
ինչպէս արդէն Լորտ Հարթիսթըն
ըսաւ՝ թէ ինչ պատճառաւ որ Վե-
հափոցով ժամանակ Լորտ Պիքսթո-
նֆիլտ և Լորտ Սթրաթֆորտ Պետար-
պիոյ և Պաթմուի Ռուսիոյ անցնելուն
հաւանութիւն տուին, նոյն պատճա-
ռաւ ինք ալ Յրանքո—Գերմանական
պատերազմին ժամանակ հաւանեցաւ
ձնել փարսիկ դաշնագրին այն յօդ-
ուածն, որ Ռուսիոյ կ'արգելուր ամ-
բութիւններ չինել կամ նաւատորմ
ունենալ Սեծովու մէջ : Լորտ Պի-
քսթոնֆիլտ և Լորտ Սթրաթֆորտ իրենք
զիրենք արդարացնելու համար ըսած
են որ թէ և Պետարպիոյ և Պաթմու-
մի Ռուսիոյ անցնելը փաստակար կը
դառնէին, այսու ամենայնիւ, տես-
նելով որ Եւրոպական ուրիշ տէրու-
թիւնը հոգ չէին ընէր այդ նշկատ-
մամբ, և իրենք ընդ այդ պատճառա-
ւ Ռուսիոյ դէմ պատերազմ մ'աչք չէին
կրնար աւանդ, ուստի ստիպուեցան
հաւանութիւն տալ : Պ. Կլաւսթոն
ալ կրնայ ըսել թէ Զրանքո—Գերմա-
նական պատերազմին ժամանակ ու-
րիշ տէրութիւնը հոգ չէին ընէր փա-
րսիկ դաշնագրին այդ յօդուածին
պահպանութեան, և ըստ սրում ինք
այդ պատճառաւ Ռուսիոյ հետ պա-
տերազմ ընելու չէր համարձակեր,
ստիպուեցաւ հաւանութիւն տալ այդ
յօդուածին ջնջուելուն :

Այսու ամենայնիւ, Պ. Հուրթիլի
պահպանողական ինքիւրեւ ինքի յայ-
տնակ տարաւ ազգայնական ընտրե-
ւոյն վրայ : և թէպէտ ինքիւրեւ ինք
հանդուցեալ երեսփոխանը Պ. Թոր-
պահպանողական մ'էր, այսու ամե-
նայնիւ ներկայ պարագային մէջ ին-

քիւրու ինքնարութիւնն, որուն բա-
ւական կարեւորութիւն կըսուէր, մեծ
պարտութիւն մը նկատուեցաւ ազա-
տականաց համար :

Արեւելեան Բոսնիայի մէջ իսլամ
դադլականաց կրած թշուառութիւնն
Անգղիոյ հասարակայնին ուշադրու-
թեան ներկայացաւ ֆիլիպին ընդհա-
նուր հիւպատոսին մի յայտարարու-
թեամբ, որ կը ծանուցանէ թէ նը-
պաստի կեդրոնական յանձնախումբ
մը կազմուած է, որ օրն եօթն հազա-
րի չափ դադլականաց կերակուր կը
մատակարարէ : Բ. Գուրն ալ հաց
բաշխել կուտայ : Բայց այս նպատա-
ներն անբաւական են. դադլական-
նաց մէջ հիւսնադութիւն ճարակած
է, և տուժամանակեայ հիւսնադանոց
մը բացուած է : աւերակ գիւղերու
մէջ մանուսնեք իսլամ դադլականաց
վիճակը ինքաւ գծու ար է. Գըզնիլը ի
մէջ Պուրպուտանէն եկող դադլա-
կանը ցնցողինքով պատեալ և պա-
տառուն վրաններու ներքեւ մընա-
ցած են : Եւ այսպիսի թշուառաց թի-
ւըն եօթամասուն ութսուն հազարի
կը հասնի :

Պուրպուտ Էկզարք Գեր. Ժողէֆ
հանգանակութեան յանձնախումբին
կողմէն յայտարարութիւն մ'ուղղեց
նմանապէս առ Եւրոպոյ, և մանա-
ւանդ իսլամ դադլականաց արտա-
ճակի վիճակն և Արեւելեան Բոսնի-
դաւառին ազգայնականութիւնը ծանու-
ցանելով կը յարէ թէ այնչափ թշուա-
ռութեանց տեղական օգնութիւնն
անբաւական է, և քաղաքակրթութե-
րայից նպատակն ալ պէտք կայ :

Բայց Էկզարք Գեր. Ժողէֆ միշտ այս-
պիսի հրտադրութիւններ կընդունի, մինչդեռ
ինք ևս ներքին թշուառութիւններէ
ազատ չէ. դեռ այս օրերս ցուրտին
ստոսկանալուն առթիւ իրլանտայի
մէջ անօթութեան մարդիկ կը մեռնե-
ն : Երբ ազգային թշուառութիւն
ներպատահին հասարակայնին օգնու-
թիւնները կրնան փոքրագոյն մասի
մ'օգնութեան հասնիլ, բայց դժբաղ-
դաւոր տոնք յիշեցնու մէջ ուժա-
ւոր չունեն : Առանց կառավարողնե-
րու սխալմանց ո՞րչափ անխել և
սխալ պատերազմներ կրնային իւր-
նայուել, որոց հետեանքը միշտ ժո-
ղովրդոց վրայ ծանրացած է :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Կոնստանդնուպոլիսի քաղաքի
Կոնստանդնուպոլիսի թէ Ռուսիա թոյլ
տալ որ Հիւսիս Անգղիոյ ազգայնա-
կան ներքին խնդրոյն :
Կիւրտոսի մէջ միջազգային յանձնա-
խումբ մը հաստատուելու համար տէրու-
թեան մէջ բանակցութիւնը մօտ օրէն
պիտի վերականգնուի :

Վանէն, Կոտանդնուպօլսէն, Տրք
Խիսէն և Դալթէժէն ընկերութեան
նորասներ հասած լինելով առաջին
տարւոյ (1878 Օգոստոս 1է 31 յուլի
սի 1879) ընդհանուր մուտքը 16
Օսմ. ոսկի եղած է։ Այս գումարէն
էբբ 100 ոսկի ծախուած է, կիս
հաթ ընկերութեան 10ն սանուց նիւ
թական և կըթական և Վանոյ Ա
Դուկասեան վարժարանի աղքատի

